ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Լիբանանի Հանրապետության կառավարության միջև մշակութային բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Լիբանանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

գիտակցելով, որ մշակույթի բնագավառում համագործակցությունը կոչված է նպաստելու ժողովուրդների միջև փոխըմբռնման զարգացմանը,

ձգտելով ազգային մշակույթի փոխհարստացմանը՝ դրանցից յուրաքանչյուրի ինքնատիպության հարգման պայմաններում,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը խրախուսում են երկու երկրների ապրելակերպին, մշակութային ժառանգությանը և ժամանակակից մշակութային ու գիտական նվաճումներին փոխադարձաբար ծանոթանալը, ինչպես նաև մասնագիտական փորձի փոխանակման նպատակով խրախուսելու և զարգացնելու են համագործակցությունը սույն Համաձայնագրով նախատեսված բնագավառներում:

Հոդված 2

Կողմերը կզարգացնեն համագործակցությունը երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մշակույթի տարբեր ոլորտներում և կխրախուսեն մասնավորապես.

- համագործակցությունը երկու Կողմերի գեղարվեստական կոլեկտիվների միջև /թատրոն, կինո, երաժշտություն, կերպարվեստ և այլն/,
- գեղարվեստական ցուցահանդեսների փոխանակումները,
- ժողովրդական ինքնագործ ստեղծագործողների համագործակցություն, ինչպես նաև փոխանակումներ թանգարանների միջև,
- կինոյի շաբաթների կազմակերպումը, համատեղ ֆիլմերի արտադրությունը երկու պետություններում:

Հոդված 3

Կողմերը կխրախուսեն մասնագետների և արվեստագետների փոխանակումները երաժշտության, կերպարվեստի, պարարվեստի, թատերական արվեստի և այլ ոլորտներում՝ երկարատև պայմանագրերով աշխատելու համար:

Հոդված 4

Կողմերը կներդաշնակեցնեն իրենց ջանքերը՝ նրանցից որևէ մեկի կողմից միջազգային փառատոներին, մրցույթներին, կոնֆերանսներին և հանդիպումներին մյուս Կողմի ներկայացուցիչների մասնակցությունը ապահովելու համար:

Հոդված 5

Կողմերը իրենց երկրների տարածքներում կկազմակերպեն նաև մշակութային միջոցառումներ, ամենամյա ծրագրեր, ընթացիկ գործնական ծրագրեր:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի նպատակների համար Կողմերը իրենց հավասար թվով ներկայացուցիչներից կստեղծեն Համատեղ հանձնաժողով, որը տարին մեկ անգամ հաջորդաբար կհանդիպի Երևանում և Բեյրութում:

Հանդիպումների ժամկետները կհամաձայնեցվեն դիվանագիտական ուղիներով: Հանձնաժողովը կմշակի համագործակցության շրջանակներում ամենամյա ծրագրերի մանրամասները և ֆինանսական ծախսերին վերաբերող պայմանները:

Հոդված 7

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ներքին օրենսդրությամբ սահմանված՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ուղիներով միմյանց իրազեկ պահելու օրվանից:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով: Այն ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հինգ տարիների համար, եթե Կողմերից մեկը համապատասխան ժամկետը լրանալուց վեց ամիս առաջ մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով չհայտնի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ կամ լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրությամբ: Այն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով:

Կատարված է Բեյրութ քաղաքում 1997 թվականի նոյեմբերի 17-ին, երկու բնօրինակով, հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Տարաձայնությունների դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի մարտի 27-ից: